ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով գիտական աստիճանների փաստաթղթերի ճանաչման և նոստրիֆիկացման, գիտական աստիճանների համադրելիության սկզբունքների մասին պայմանավորվածություններով,

ձգտելով պահպանել և զարգացնել գիտական կապերը,

հաստատելով բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցությունը շարունակելու ձգտումը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին:

Հոդված 1

Կողմերը իրենց պետությունների տարածքում ճանաչում են մյուս Կողմի համապատասխան պետական որակավորման մարմնի տված գիտական կոչումների և գիտական աստիճանների շնորհման մասին պետական նմուշի փաստաթուղթը վկայագրեր ունեցողների վերաատեստավորման ճանապարհով, Կողմերից յուրաքանչյուրի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 2

Կողմերի լիազոր մարմինները.

անցկացնում են փոխադարձ խորհրդակցություններ՝ որակավորման ազգային համակարգերի զարգացման հայեցակարգի և բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի որակավորմանը առաջադրված պահանջները, ինչպես նաև գիտաշխատողների մասնագիտությունների ազգային ցանկերը (անվանացանկերը) մշակելիս,

ապահովում են բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման պետական համակարգում գիտական աստիճաններ հայցողներին առաջադրվող հիմնական պահանջների համադրելիությունը:

Հոդված 3

Կողմերի լիազոր մարմինները կզարգացնեն համագործակցությունը բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում՝

իրենց տարածքի ատենախոսությունների պաշտպանությունների խորհուրդներում մյուս Կողմի հայցողների ատենախոսությունների պաշտպանությունների անցկացման համար հավասար պայմաններ ստեղծելով,

ժամանակին փոխադարձաբար տեղեկացնելով Կողմերի բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման

պետական համակարգում կատարվող փոփոխությունների մասին, փոխանակելով այդ կադրերի ատեստավորման հարցերի վերաբերյալ համապատասխան նորմատիվ ակտեր և այլ նյութեր,

փորձի փոխանակման նպատակով անցկացնելով անհրաժեշտ համատեղ միջոցառումներ՝ բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման ընթացքի կառավարման և կատարելագործման ուղղությամբ:

Հոդված 4

Ատենախոսությունների փորձաքննության որակը բարձրացնելու նպատակով Կողմերի լիազոր մարմինները աջակցում են՝

մյուս Կողմի ատենախոսության պաշտպանության խորհուրդներում առաջատար գիտնականների և մասնագետների մասնակցությամբ, նաև որպես ատենախոսությունների ժամանակ ընդդիմախոսներ,

մյուս Կողմի ատենախոսության պաշտպանության խորհուրդներում պաշտպանված ատենախոսությունների լրացուցիչ փորձաքննության անցկացմանը՝ իրենց տարածքում ատենախոսությունների պաշտպանության խորհուրդներում:

Հոդված 5

Հայաստանի Հանրապետության կողմից լիազոր մարմին է սահմանված Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը, իսկ Բելառուսի Հանրապետության կողմից՝ Բելառուսի Հանրապետության բարձրագույն որակավորման պետական կոմիտեն::

Հոդված 6

Մասնակցությունը սույն Համաձայնագրին չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության այլ ձևերի օգտագործելու մեջ:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված կոնկրետ հարցերի շուրջ կարող են ստորագրվել լրացուցիչ համաձայնագրեր և արձանագրություններ:

Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Համաձայնագրի տեքստում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հարցերով տարաձայնություններ առաջանալու դեպքում Կողմերը կվերացնեն դրանք խորհրդակցությունների և բանակցությունների ճանապարհով:

Հոդված 10

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցագրի ստացման օրվանից:

Սույն Համաձայնագիրը կգործի հինգ տարվա ընթացքում, և նրա գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա հնգամյա ժամկետներում, եթե Կողմերից ոչ մեկը համապատասխան ժամկետը լրչանալուց 6 ամիս առաջ գրավոր չի ծանուցի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Մինսկ քաղաքում 2000թ. հուլիսի 19-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում առավելությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի փետրվարի 6-ից: